

**«Վանաձորի Հովի. Թունանյանի անվան պետական մանկավարժական  
ինստիտուտ» ՊՈԱԿ**

Հաստատված է

գիտական խորհրդի նիստում

« 30 » հունվար 2009թ.

(արձանագրության թիվ 1)

գիտ. խորհրդի նախագահ

\_\_\_\_\_ Գ.Կ. Խաչատրյան

**Վանաձորի Հովի. Թունանյանի անվան պետական  
մանկավարժական ինստիտուտի անցակետից  
օգտվելու կարգ**

1. Ինստիտուտի բոլոր աշխատակիցները և ուսանողները պարտավոր են ինստիտուտի տարածք մտնել և դուրս գալ (նաև դասամիջոցների) իրենց էլեկտրոնային անցաքարտերով:
2. Քաղաքացին անցակետ պետք է մտնի անձը հաստատող փաստաթղթով և ինստիտուտի տարածք մտնելու թույլտվություն ստանա այն աշխատակցի համաձայնության ու հիմնավորման դեպքում, ում այցելում է: Նրա մուտքն ու ելքը պետք է կատարվի համապատասխան անցաթղթով, որը տրվում է անցակետի աշխատակցի կողմից: Դուրս գալիս անցաթուղթը պետք է վերադարձվի անցակետ՝ համապատասխան ստորագրությամբ:
3. Էլեկտրոնային անցաքարտը կորցրած կամ վնասած անձանց տրամադրվում է ժամանակավոր անցաքարտ՝ ելումուտը գրանցելով անցակետի ծառայությունում:
4. Էլեկտրոնային անցաքարտը վերականգնելու համար սահմանվում են հետևյալ վճարները.  
ա/ առաջին անգամ – 700դրամ,  
բ/ երկրորդ անգամ – 2.500 դրամ,  
գ/ երրորդ անգամ – 5.000 դրամ:
5. Էլեկտրոնային անցաքարտը ուրիշին փոխանցած անձանց՝  
ա/ առաջին անգամ հայտարարվում է նկատողություն,  
բ/ երկրորդ անգամ՝ խիստ նկատողություն,  
գ/ երրորդ անգամ կրկնվելու դեպքում՝ հեռացվում է ինստիտուտից: